Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 մարտի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Գ. Մելիքսեթյանը և Ն. Ավետյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի մարտի 9-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	էլեկտրոնային հասցե
«Հուսալի Կամար» ՍՊԸ	ք. Երևան, Կիևյան 12շ. 50 բն. հեռ. 094 019955	husali-kamar@mail.ru
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14 հեռ. 043 600090	gritig@inbox.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **նախահաշվային արժեք – 8 297 420 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - գետերի ափերի պաշտպանության շինարարական աշխատանքների – Այգեձորի մայր ջրանցքին զուգահեռ հենապատի ամրացում մոտ 70մ երկարությամբ (ՀՀ Տավուշի մարզ), Գավառագետի հունի մաքրում մոտ 4200 մ (ՀՀ Գեղարքունիքի մարզ), Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600 մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համայնքի Մարտունի գյուղի տարածքում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերի վերականգնում մոտ 600մ երկարությամբ հատվածում (ՀՀ Լոռու մարզ)				
	«Հուսալի Կամար» ՍՊԸ	3 700 000	-	3 700 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	7 900 000	-	7 900 000
Չափաբաժին 2 **նախահաշվային արժեք – 7 255 610 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**				

Տեխնիկական հսկողության ծառայություններ - գետերի ափերի պաշտպանության շինարարական աշխատանքների – Մեծամորի հեղեղատարի հունի մաքրում մոտ 1000 մ և ափապատնեշի բարձրացում մոտ 150 մ երկարությամբ, ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500 մ հատվածում, Նարեկի սելավատարի հունի մաքրում մոտ 3000մ և ափերի ամրացում մոտ 400մ, Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800 մ երկարությամբ, Որոտան գետի հունի մաքրում Սիսիան քաղաքի կենտրոնական կամրջից վերև և ներքև մոտ 1400մ հատվածում, Երվանդաշատ համայնքի Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի բարձրացում մոտ 650մ				
	«Հուսալի Կամար» ՍՊԸ	3 080 000	-	3 080 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	7 920 000	-	7 920 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) 4.7 կետի (Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները) 4.7.2 ենթակետում նշված չէ Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը: Գնային առաջարկի բացվածքում (Հավելված 2.1) 1-ին չափաբաժնի միավորների ընդհանուր գումարը չի համապատասխանում Գնային առաջարկի (Հավելված 2) 1-ին չափաբաժնի համար առաջարկված գնի հետ: Հայտով չեն ներկայացվել «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված Հավելված 3–ին կից փաստաթղթերը՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները: Ներկայացված չեն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Դիմում Հայտարարության (Հավելված 1) էլեկտրոնային ստորագրությունը վավեր չէ: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) 1.3 կետի (Հայտարարագրի ներկայացումը) 1.3.1 ենթակետում սխալ է լրացված Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին: «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում (Հավելված 3) լրացված չեն աշխատակազմում ներառված մասնագետների կատարված աշխատանքները: Ներկայացված չեն Հավելված 3–ին կից փաստաթղթերը՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր

համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները: Ներկայացված չեն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (համաձայնագրի) կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ներկայացված ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-20/5-1 պայմանագիրը ներկայացված է ոչ բնօրինակ և հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը (15.03.2022թ.) շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Ս. Ասրյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Գ. Մելիքսեթյան

---------- Ն. Ավետյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան